


WILHELM
BESTELLT
8.2.97
3-4 N

ԻՐԱՎՈՒՆԿ



Redaction du journal armenien
"Iraounk" Vienne
Hantès-Amsoria

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 22 ՅՈՒՆԻՈՒԱՐ 1897

ԹԻ 1

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հերկայ 1897 տարեշրջանի

Պոռկարիոյ համար տարեկան 100 ֆր.
" " 1/2 " 5 "
Արտատպանի համար " 12 "
" " 1/2 " 6 "
Կանխիկ վճարելի

Համակ դրամ եռաշրջ խրկել հետեւեալ հասցեով

ԽՐԱՏԱՐԱԿՈՒԻ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌԵԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Редакция на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България).

Rédaction du journal

„Iraounk“

VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գործընկերները
եւ լեւոյն դրկոշիր եւ յարմար դատ.
ուսմանը միայն կը հրատարակ.
ոչիւ անբողոքի կամ մատար.

Յրանուցմանց տողը 20 սանթիմ.
կրկնէ՝ աւելի անգամներու համար
20 աւ 100 զեղ կը լինի:

ՄԵՐ ՄԷԿ ՏԿԱՐ ԿՈՂՄԸ

Թերթիս վերջին թիւին մէջ մեր
մէկ աշխատակիցը իրաւամբ գի-
տել տուած է թէ անհատական գի-
տակցութեան չափազանց զարգա-
ցումը, կամ ուրիշ խօսքով, ան-
հատներու եւականութիւնն է աղ-
բիւր բաղմաթիւ չարիքներու, ու-
րոնք անգարմանելի փառանք կու-
տան մեր հանրային գործերուն:
Այս չարիքներէն մին է անշուշտ
Հայերու անընդունակութիւնը հա-
ւաքական ոյժեր գոյացնելու եւ ա-
նոցմով գործելու մասին: Մեր
ժամանակակից պատմութեան եւ
մեր ներկայ կեանքին մէկ հարե-
ւանցի ուսումնասիրութիւնն իսկ
կը բաւէ մեզ համոզելու թէ հայ
անհատական ոյժեր, գրական ըլ-
լան թէ արհեստական, կամ ուրիշ
կարգի, որքան մեծամեծ արդիւնք-
ներ արտադրած են, այնչափ ալ
հաւաքական ոյժերէ արտադրեալ
գործեր մեր մէջ աննշան են եւ մին-
չեւ իսկ կրնանք ըսել, իրենց բա-
ցակալութեամբ կը փայլին: Այս
ճանաչողութիւնը մեզ համար այն-
քան անկեղծ է որ աւելորդ կը
տեսնենք փատտերով եւ օրինակնե-
րով զոյն հաստատել: Կը բաւէ
միայն յիշատակել այն հարկաւա-
ւոր ընկերութիւններ, որ վերջին
երեսուն տարիներու ընթացքին
մէջ ազգօգուտ նպատակներով կաղ-
մուցան եւ անուպի նման անհետ
աներկութեամբ ազգային կեան-
քի հորիզոնէն:

Հաւաքաբար գործելու մեր այս
անկարողութիւնը իրական գըծ-
բողգութիւն մ'է մեզ համար, ու-
րովհետեւ յայտնի է թէ հոյակապ
գործեր անհրաժեշտաբար պէտք
ունին հաւաքական ուժերու. ա-
սոնց պակասը չկրնար ընդ ուրիշ
ոչ մի ոյժ, ոչ մի կարողութիւն,
որքան ալ բարձր, որքան ալ մեծ
ըլլայ:

Մեր ազգային ներկայ տուա-
պանքները ասոր որքան անհիւ-
քելի նոյնքան տխուր ապացոյց-
ներն են: Մենք համալուծ ենք
որ եթէ հաւաքական գործունեու-
թեան ունակութիւնը եւ ճաշակը
արմատ ձգած ըլլային մեր մէջ,
այսօր ոչ միայն զերծ մնայած

պիտի ըլլայինք բաղմաթիւ աղէտ-
ներէ, այլ եւ պատահական անխու-
սափելի աղէտի մը ժամանակ իսկ,
չարիք մեր սեփական միջոցներով
զարմանելու, ինչպէս առհասարակ
մեր ամեն պէտքերուն նկատմամբ
մենք մեզմով բաւականանալու կա-
րող ժողովուրդ մը պիտի հանդի-
սանայինք:

Այլ ժամանակ է որ ըմբռնենք
այս էական կէտը. մեր ազգային
գոյութեան հիմերուն սպառնացող
վերջին փորձանքներէն յետոյ ալ
չուշաբերիլ պիտի նշանակէր գուցէ
պատրաստուիլ կրելու պատմու-
թեան ամենէն ահեղ գատաճիւղը:

Ի՞նչպէս, ի՞նչ միջոցներով կա-
րելի է ջանալ՝ հաւաքական ոյժե-
րով աշխատելու տրամադրուելունը
մոցնելու եւ ընդհանրացնելու մեր
մէջ: Ահա՛ կենսական հարցը:

Մատաղ սերունդին համար դպ-
րոցական կրթութիւնը շատ մեծ
գիւր մը կրնայ խաղալ այս մասին,
եթէ մեր դպրոցներուն տանք մեր
էական պահանջներուն համապա-
տասխան ուղղութիւն մը: Այս
միայն բաւական չէ սակայն: Դպ-
րոցին ամեն ճիւղերը մեծ մասամբ
մը կը չեզոքանան եւ ապարդիւն
կը մնան ինչպէս ընտանեկան ան-
համապատասխան կրթութեամբ,
նոյնպէս եւ դպրոցական շրջանին
յաջորդող գործնական կեանքին
տարբեր ուղղութեամբը:

Կրթական դեր կատարող հաս-
տատութիւն մ'ալ հարկաւոր է
չափահաս սերունդին համար:

Հարկաւոր է մեզ ազգային կաղ-
մակերպութիւն մը, որ փոխանակ
միմիայն ազգասիրական զգացում-
ներու վրայ հիմնուելու, անհատա-
կան շահերն ալ նկատի առնէր եւ
զանոնք սերտ աւելցնէր ի-
րարու հետ կապելով՝ նպաստէր
համերաշխութեան եւ փոխադարձ
աջակցութեան ոգին ծաւալելու
միութեան անդամներուն մէջ եւ
այս եղանակով ձգտէր հասնելու
իր ազգային նպատակին:

Ուրախութիւն մ'է մեզ համար
ժանուցանել մեր ընթերցողներուն
թէ գործնական մտքի տէր ազգա-
յիններու շրջանակի մը մէջ այս
ոգով եւ ուղղութեամբ կը պատ-
րաստուի միութեան մը նախագիծը,

որոյ գլխաւոր կէտերու վրայ ծա-
նօթութիւններ պիտի տանք մեր
յառաջիկայ թիւով:

ԿԱՊՈՅՏ ՏԵՏՐԱԿՆԵՐԸ

Կապոյտ տետրակները, զոր անգ-
լիական կառավարութիւնը վերջիւս
հրատարակեց, հետեւալ տեղեկու-
թիւնները կը պարունակեն:

— Անցեալ տարւոյ սեպտ. ամսոյ
մէջ Լօրտ Սօլզպերի աւստրօ-հուն-
գարական կառավարութեան կար-
ծիքը նախապէս առնելէ ամիս մը
յետոյ, հինգ մեծ տէրութեանց
շրջաբերական մը կը զրկէ, որով
կ'առաջարկէ թուրքիոյ համար
բարենորոգմանց ծրագիր մը պատ-
րաստել Կ. Պոլսոյ ղեկավարներուն
ձեռքով եւ բռնի միջոցներ գործա-
դրել թուրքիոյ դէմ, եթէ Սուլ-
թանը մերժէ ծրագրուած բարե-
նորոգումները:

Աւստրիա եւ իտալիա կը հաւա-
նին Լօրտ Սօլզպերի առաջարկին:
Գերմանիոյ արտաքին գործերու
նախարարը Պէռլինի անգլիական
ղեկավարին կը պատասխանէ թէ
չկրնար այնքան կարեւոր խնդրոյ
մը մասին վերջնական եւ սրոշ պա-
տասխան մը տալ անգլիական կա-
ռավարութեան՝ առանց նախապէս
խնդիրը հասուն նկատողութեան
առնելու. բայց կրնայ հաստա-
տապէս ըսել որ Գերմանիա յօժա-
րակամ պիտի յարի ամեն գործու-
նէութեան, որոյ մասին բոլոր տէ-
րութիւնները միաբանին՝ թուր-
քիոյ անկախութիւնը պահպանելու
եւ երկրին բոլոր բնակիչներուն կա-
ցութիւնը անխտիր բարեօրէն
նպատակով:

Ռուս կառավարութիւնը նախ
առարկութիւններ կը յարուցանէ
բռնի միջոցներ գործադրելու առա-
ջարկին դէմ, սակայն նոյնմբ. ամ-
սոյ մէջ Զարը կ'արտօնէ Տ. Շիշ-
քինը յայտարարելու որ եթէ Սուլ-
թանը բարենորոգումներու գործա-
դրութեան մասին իր սովորական
խուսափողական միջոցներուն դիմէ,
այն ատեն Ռուսիա պիտի հաւանի
նկատողութեան առնել թուրքիոյ
վրայ բռնութիւն բանեցնելու ա-
ռաջարկը՝ սա պայմանով որ բոլոր

տէրութիւնները միաբան ըլլան
այս կէտի մասին:

Ֆրանսական կառավարութիւնը
գիւր. ամսոյ մէջ Լօրտ Սօլզպերի
կը զրկէ ծանուցագիր մը, ուր
պարզուած էին այն հրահանգներ,
զորս ֆրանսական արտաքին գոր-
ծերու նախարարը տուած էր Կ.
Պոլսոյ ֆրանսական ղեկավարին:
Այս հրահանգներով Տ. Հանօթօ
Տ. Գամպօնի կը պատուիրէ միւս
տէրութեանց ղեկավարներուն հետ
համաձայն ընթանալ եւ գործել՝
սա պայմաններով որ 1. թուրքիոյ
անկախութիւնը յարգուի. 2. ոչ
մի տէրութիւն առանձին գործէ եւ
3. թուրքիոյ մէջ եւրոպական հա-
մատրութիւն մը չհաստատուի,
այսինքն երկրին կառավարութեան
դէկը չանցնի մեծ տէրութեանց
ձեռքը:

Գալով բռնի միջոցներու, Ֆրան-
սա Ռուսիոյ պէս կը խոստանայ
խնդիրը նկատողութեան առնել,
եթէ բոլոր տէրութիւնները միա-
ձայն հարկաւոր տեսնեն այդօրի-
նակ միջոցներու գործադրութիւնը:
Կապոյտ տետրակը կը պարու-
նակէ նաեւ հիւպատոսական տեղե-
կագիրներ Հայկական ջարդերուն,
Զէյթունի ապստամբութեան եւ այլ
պատահարներու եւ երկրին վիճա-
կին մասին, սակայն նոր տեղեկու-
թիւն մը չտար:

Հետաքրքրական է միայն բողո-
քոյ ծանուցագիր մը, զոր Եւրոպի
պալատը տուած է անգլիական
ղեկավարներուն, զայն Լօրտ Սօլզ-
պերի հաղորդելու խնդրանք:

Ծանուցագրին իմաստը հետե-
ւայն է:

— Սուլթանը դառնապէս կը գա-
տաւ այն աշակցութիւնէն զոր
Անգլիացիք կ'ընծայեն Հայերուն,
մինչդեռ Անգլիա ասկէ առաջ խը-
տիր չէր դնէր Սուլթանին հպա-
տակ դանազան ցեղերուն միջև:
Անկարելի է բարենորոգումներ
գործադրել, քանի որ Հայերը շա-
րունակ են իրենց այժմեան ընթաց-
քը: Սուլթանը կը փափաքի որ
լաւ խորհուրդներ արուին Հայե-
րուն, վասն զի եթէ անոնք չփոխեն
իրենց ընթացքը, Գուռն ալ պիտի
ստիպուի բացարձակապէս վերա-
պահել իր գործերու ազատութիւնը:

ՆՊԱՍՏԻ ԳՈՐԾՆ

Ի ՊՈՒԼԿԱՐԻԱ

(Շարունակ. նախ. քիշեկ)

Օր. Ֆրայդէր՝ թէեւ իր կայքը վառնաի մէջ հաստատած, սակայն իր նպատի շրջանակը տարածեց Պուլկարիոյ այն քաղաքներու վրայ եւս ուր կը գտնուին թշուառ հայ գաղթականներ, ինչպէս Շումի, Բազարճըք, Ռուսուք, Բաւվա-տի, Եւայլն: Նպատամատոյց մարմիններ կազմուեցան, և այդ տեղերու գաղթականներուն վիճակն ալ մանրազննին քննութեան ենթարկուեցաւ, և անոնք որ բուրովին զուրկ էին ապրուստի միջոցէ, ընդունեցան և կընդունին ցարդ իրենց օրական հացը՝ գոնէ:

Ռուսուքի մէջ աւելի քան երկու հազար գաղթականներ կան յետին չքաւորութեան մասնուած որոնց տրուած նպատու անշուշտ չէր հաւասարիր վառնաի խեղճութեանը: Բայց մէկ երկու շաբաթէ իվեր հոն ալ գործը քիչ շատ ընդարձակուած է. հանդերձանք կոշիկ և ուրիշ անմիջական պէտքեր կը հոգացուին ամենէն ստիպողական պարագաներու մէջ: Վերջերս հոն գնաց ուրիշ ամերիկուհի օրիորդ մը որ Պոլսէն եկած էր՝ այս նպատակին համար մասնաւորապէս: Հիմակ ինք կը վարէ Ռուսուքի նպատամատոյց մարմին գործերը, Օր. Ֆրայդեր կողմէ տրուած հրահանգներուն համեմատ:

Ինչպէս արդէն ըսինք, Շումի լաի մէջ նպատի գործին սկիզբէն իվեր ընդարձակ և կանոնաւոր կազմակերպութիւն մը տրուած էր: Մէկ քանի ընդարձակ տուններ վարձուեցան, վառնաէն զրկուած ընտանիքներ տեղաւորուեցան հոն, ուր հաց, կերակուր, բժշկական դարման, վառելիք են. կը բաշխուին իրենց:

Չմոռնանք ըսելու որ վառնաի քարանձինաի շէնքը որ ի սկզբան այնքան լաւ պատասպարան մը եղաւ նորեկ գաղթականներուն և որ տեղւոյն հեռաւորութեան և մենութեան պատճառաւ պարպուեցաւ, գեռ իր մէջ կը պատասպարէ հարկեր քսանի չափ անձինք, որոնք միեւնոյն բարիքները կը վայելին:

Սակայն, երբ մէկ կողմէն Օր. Ֆրայդէր թշուառ գաղթականներուն առօրեայ անմիջական պէտքերը կը հոգայ՝ միւս կողմէ ուրիշ անձ մը, Մսթըր Էտըմս, անգլիացի կարեւոր գործարանատէր մը, որ աւելի քան երեք ամսէ ի վեր վառնա կը գտնուի, նպատի գործը կը լրացունէ տարբեր դրութեամբ:

Գիտենք թէ Պուլկարիոյ ապաստանող պոլսեցի փախստականները մեծագոյն մասամբ միջին դասակարգին պատկանող արհեստաւորներ են. ամենէն նուրբ արհեստէն սկսեալ ամենէն կոշտ արհեստն իր բազմաթիւ ներկայացուցիչներն ունի անոնց մէջ. ոսկերչութեան,

հացագործութեան, կահագործութեան, հիւանդութեան, երկաթագործութեան, կոշկակարութեան, և ուրիշ այս կարգի արհեստներու հմուտ անձինք անշուշտ չափի կրնային ամենքն ալ իրենց ճարտարութիւնը շահագործել վառնաի պէս անձուկ կեցողոյն մը մէջ: Բայ ի մէկքանի աննշան բացառութիւններէ, միւսները ձեռնունայն պիտի թափառէին՝ անճարակ և սղորմուկ:

Արդ, Մ. Էտըմս եկաւ այդ ականաւոր գործարարին առաջին առնել՝ զբաղում և հետեւապէս ապրուստ հայթայթելով արհեստաւորներու:

Պատուական ծրագիր արգարեւ: Եւ այժմ վառնաի մէջ կան երեք գործարաններ՝ երկաթագործութեան, պղնձագործութեան և կահագործութեան: Բաւական թւով հայ արհեստաւորներ, բնականաբար ճարտարագոյններէն ընտրուած, շաբաթականով կ'աշխատին այս գործարաններուն մէջ և պէտք չունին այլևս ձեռք կարկառելու Օր. Ֆրայդէրի, որ մինչեւ այն առնէն յօժարափոյթ հոգացած էր անոնց պէտքերը: Մ. Էտըմս, որ առաջին կարգի արհեստագէտ մ'է, ինք անձամբ կը հսկէ նորահաս տառ գործարաններուն վրայ և ամեն շինուելիք գործերուն հիմնադրներն ինք կուտայ:

Մտադրութիւն կայ կապերտագործութեան ճիւղ մը եւս բանալ, որ նոյնպէս բաւական անձանց զբաղում պիտի հայթայթէ: Մէկ խօսքով, Մ. Էտըմսի նիւթապէս և հիմնապէս օգտուէտ այս ձեռնարկ սա հօր միւլիթարութիւնը կը պարգեւէ հէք արհեստաւորներուն թէ՛ հոս եւս, օտար հողի վրայ լրջօրէն նկատողութեան և գնահատութեան կ'արժանանայ իրենց ճարտարութիւնը, որուն շնորհիւ կըրնան իրենց ապրուստը շահիլ: Պըզտիկ բան չէ ասիկա:

Կարգ մը արհեստաւորներալ, որոնք իրենց գործիները Պուլիս ձգած փախած էին, թէ Օր. Ֆրայդեր և թէ Մ. Էտըմսի կողմէ տրուած դրամական նպատաներու միջոցաւ՝ դարձեալ ձեռք ձգեցին իրենց գործիներ և սկսանք քիչ շատ յաջողութեամբ իրենց արհեստով զբաղիլ:

(Շարունակելի)

«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԿԻԱ»

(Շար. նախորդ քիշեկ եւ վերջ)

Մուրատ պէյ կը հաճի մեզ ներքի մեր յեղափոխական շարժումներուն համար. ինչ բարեսրտութիւն, որ շատ չտարբերի վերջին ընդհանուր ներումին հեգնական բնութիւնէն. կը բարեհաճին ներել մեզ՝ որ հարկեր հազարներով ջարդուեցանք ու կողոպտուեցանք և մեր կայքերէն հայածական վտաւրուեցանք օտար երկիրներու մէջ թշուառութեան ճիւղաններուն մատնուելու համար:

Եւ աշխարհակալ ազատամտութեան պիտի սպասենք բարիք և բարենորոգում ու պիտի յարինք Երիտասարդ Թուրքիոյ, որպէս զի փութացնենք Սահմանադրութեան գործադրութիւնը: Սակայն անգամ մը գործադրուեցաւ սա և իր հեղինակը, Միտհատ Բաշա, այն առնէն օսմ. կայսրութեան զեկն ունէր ի ձեռքին. այսու ամենայնիւ այդ ժամանակն էր որ Շէյխ Ռապէյտուլլահ և Շէյխ Ճէլալէտտին իրենց քսաններէ շահատակութիւններով այնքան տրեան դետակներ հոսեցուցին Հայաստանի մէջ: Խընուսի 5000 Հայերը ջարդողներուն համար պատիժ մը չորոշուեցաւ և մեզ օգուտ մը չունեցան ոչ սահմանադրութիւն և ոչ Միտհատ Բաշա: Անցեալին դասերը պէտք չէ որ մոռցուին:

Չենք վարմանար որ Երիտասարդ Թուրքերը Բարիքի մէջ կաշխատին Հայերուս ջանքերը չեղբացնելու: Բիշա պէյ ամեն ճիւղ թափեց, անցեալ տարի (Նոյեմ. 3) ի նպատակ մեզ երեսփոխանական ժողովին մէջ բանախօսելու պատրաստուած անձնաւորութիւններէ մին, Տ. Տընիս Գօշէնը, համոզելու որ մէկ կողմ ձգելով հայկական խընդիրը, հարստահարեալ Թուրք ժողովուրդը խնդրոյ առարկայ ընէ և Սահմանադրութեան գործադրութիւնը պահանջէ: Պատ. երեսփոխանը մասամբ միայն համակերպեցաւ այս թախանձանքին՝ Թուրք ժողովուրդի խեղճութիւնը ի վեր հանելով, առանց Միտհատ Բաշայի Սահմանադրութեան վրայ ծանրանալու իր բանախօսութեան մէջ:

Երիտասարդ Թուրքերը այս մասնակի յաջողութիւնէն քաջալերեալ, Փրանսացի տիկիններու կողմէնք միթիւնիկ նպատակը խանդարելու գործին, փորձելով դիմումներու միջոցաւ այս մոռք ազդեցութիւն գործիլ ականաւոր տիկիններու և օրիորդներու վրայ որպէս զի փոխանակ հայկական խնդրին, միթիւնիկն զբաղման առարկայ ընեն տառապնալ Թուրքիոյ ժողովուրդները և սահմանադրութիւնը: Սակայն այս անգամ փորձը չյաջողեցաւ, և տիկիններն ու օրիորդները հաստատ մնացին իրենց առաջադրութեան վրայ: Սահմանադրական օսմանցիներու այս անյաջողութիւնը արդիւնք է Հայ Ուսանողաց Մասնախմբին ատենու պետ Տ. Ս. ի աջակցութեամբ գործունէութեան:

Երիտասարդ Թուրքիոյ կ. Պուլիս մասնախումբն ալ դետականներուն մատուցած էր խնդրագիր մը, որով կը նկրտէր հաստատել թէ հայկական խնդիր չկայ, այլ միայն ընդհանուր բարենորոգման խընդիր և թէ հետեւաբար պէտք էր գործադրել սահմանադրութիւնը, որով Թուրքիոյ բոլոր բնակիչները զոհ և երջանիկ պիտի ըլլային:

Այս ամենը վարմանալի չէ. վարմանալի է սակայն որ Բարիքի մէջ գտնուեցան Հայեր, որոնք Թուրք

սահմանադրութեան քսաներորդ տարեդարձին առթով տրուած ճաշկերոյթին մասնակցելով, բաժակներ պարպեցին հայկական խնդիրը մարելու, հայկական կոտորածներու հեղինակները անպատիժ թողելու և մեր տրհաւրալի տառապանքներուն ի փոխարինութիւն՝ մեզ մաքիւլէլեան օրէնսդրութիւն մը, սահմանադրութիւնը, շնորհելու նպատակը ունեցող Երիտասարդ Թուրքերուն հետ:

Թող մեկնէ, ով որ կրնայ:

Որպէս զի հայ երիտասարդութեան համակրութիւնը կարենան շահիլ, ինչպէս ականերեւ կը փափաքին, մեր իսլամ երկրակիցներ պարտին նախապէս իրենց իրաւան ազատամտութեան և անկեղծութեան շօշափելի նպատակներ, և իրենց ներքին ոյժը գործնականապէս ցոյց տալ: Թող ընդունին թէ Թուրք բռնապետութեան և իսլամ միլեթանութեան Հայերուն վրայ գործած չարիքները անշնչելի ամօթ մը պիտի մնան Թուրքիոյ ճակտին վրայ և փոխանակ մեզ ներելու ծիծաղելի յաւակնութիւնը տածելու, մեզմէ ներողութիւն թող խնդրեն, ինչպէս կը պահանջէ արդարութիւնն ու լուսաւոր անկեղծութիւնը: Թող խոստովանին թէ Հայերը իրենց արիւնը թափեցին երկրին համար, որմէ անշատ և անկախ իշխանութիւն մը հիմնելու նպատակ չունէին, որպէս անհրեք ի կերպով կ'ապացուցանեն մեր յեղափոխականներու յայտարարութիւնները և մեր բոլոր դիմումներն ու խընդրագրերն առ Եւրոպա:

Գիտենք սակայն դժբաղդաբար որ դարերու ընթացքին մէջ արմատացած թրքական նախապաշարութեան և իսլամական աւիւնը երբեք թոյլ չպիտի տան Երիտասարդ Թուրքիոյ՝ Հայերուս հանդէպ ճշմարտութիւնը կատարելապէս ընդունելու և խոստովանելու արիւթիւնն ունենալ և հայ ու Թուրք տարբերու միջեւ անկեղծ համաձայնութեան մը ճամբան հարթել:

Բարիք 3 Յունիս

Տ. Արտիկեան

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուրկազ 10 Յունիս

Տիւրք լուր մ'ունիմ ձեզ հաղորդելիք: Այդ վարժարանը, որ շատ գոհացուցիչ վիճակ մ'ունէր, երեք օր առաջ փակուեցաւ: Վարժարանի շէնքը անհատի մը սեփականութիւնն էր և վարձքով բռնուած. սեփականատէրը վարձագիրը կանոնաւորապէս չստանալուն պատճառով, կերթայ վարժարան, բանալիները կը պահանջէ ու վարժարանը կը փակուի և այս կըլլայ ժամանակէ մ'իվեր տեղիս ժողովուրդին մէջ ծագող երկպառակութեան ամենէն ցաւալի

հետեւեալքը, անձնական հակառակութեանց և ունայնամիտ փառասիրական ձգտումներու արդիւնքը, ինչպէս յաճախ կը պատահի մեր ազգին մէջ:

Մինչեւ հիմայ վարժարանը կը կառավարուէր թաղ. խորհուրդի ձեռքով: Մէկ քանի անձեր, ուրոց առաջնորդը ազգասէր երեւնալու և պաշտօնով մը փառաւորութեամբ ստանդի տնէջէն բռնուած էր, կը դիմեն կառավարութեան, կը պահանջեն որ վարժարանին համար առանձին հոգաբարձութիւն մը ընտրուի երկրին օրէնքներուն համաձայն և կը յաջողին ժողովրդին մեծամասնութեան կամքին հակառակ ընտրութիւն մ'ընելով ինքզինքնին հոգաբարձու ընտրել տալ 11 քուէով:

Նորընտիր հոգաբարձութիւնը, հազիւ ընտրուած, կը սկսի հաշիւ պահանջել թաղ. խորհուրդէն և կալթակ. յանձնաժողովէն, որոց համար ոմանք լուր տարածեցին թէ ազգին ստակը խորած են: Գրգռութիւն և երկպառակութիւն տակաւ կը շատնան: Թաղական և Յանձնաժողով ըստ կարի կը մաքառին իրենց հակառակորդներուն դէմ, բայց վերջապէս վշտացած կը հրաժարին և գործերը կը մնան երեսի վրայ:

Իրերու այս ողբալի կացութեան դարման մը տալու նպատակով հեռագրով մը կը խնդրուի Գեր. Ար. սէն վարդ. Վահանիէն փութալ գալ այստեղ: Կաթողիկոսական այցելու հովուին առաջին գործը կըլլայ խնդիրը ուսումնասիրելէ յետոյ՝ Գաղթ. Յանձնաժողովը յորդորել որ ետ առնէ իր հրաժարականը. բարեբաղդաբար ապարդիւն չեն մնար իր յորդորները և կարօտ գաղթականները վերատին կը սկսին ստանալ անգլիական նըպատամատոյց ընկերութեանց նըպատները, որոնք դադրած էին Յանձնաժողովին հրաժարելուն պատճառով:

Թաղ. խորհուրդի նոր ընտրութիւն մ'ալ կը կատարուի և հօթն հոգի կընտրուին, որոց երկուքը կը հրաժարին, և հինգը կը սկսին պաշտօնավարել:

Այժմ բնականաբար թաղ. խորհուրդը վարժարանի գործին չի միջամտեր և բոլորովին հոգաբարձութեան կը ձգէ այդ հոգը:

Եկեղեցին հաստատ հասոյթ մը չունի, մինչև իսկ վարժարանի համար չենք մը չունինք: Նախորդ թաղ. խորհուրդը ազգայիններէ կամաւոր նուէրներ տանելով և ձանգանակութիւններ ընելով կը գոցէր իր ծախքերը: Իսկ հոգաբարձուները հիմայ կաշխատին և կեղեցիին հասոյթները առնել: Թաղ. խորհուրդը չտար զանոնք առարկելով որ եկեղեցին արդէն պարտքի տակ ինկած է և թէ հոգաբարձութեան պարտքն է գտնել դպրոցը պահելու միջոցները:

Առ այժմ կարեւոր շարժում մը չի տեսնուիր շարիքին առջևն առ:

Ներսէս համար. տեսնենք ինչ պիտի ըլլայ ասոր վերջը:

Եթէ միութարութիւն մ'ունինք, այնալ Յանձնաժողովին կանոնաւոր և օգտաւէտ գործունէութիւնն է: Նախապէս եկեղեցիին մէջ պատու պարուած գաղթականները այժմ փոխադրուած են մասնաւորապէս շինուած շէնքի մը մէջ որ 10 սենեակներէ կը բաղկանայ: Օրական 200 հաց և 20 քիւօ միս կը բաշխուի կարօտեալներուն: Եփուած կերակուրէն և ապուրէն ուղքատները կուգան իրենց բաժինն առնելու: Նոյնպէս զգեստ, կոշիկ, ածուխ են: Կը բաժնուի չունեցողներուն: Յանձնաժողովի ատենապետ Տ. Միհրան Գրիսէր անդու կը հսկէ գործառնութեանց՝ երկու գրագիրներու աջակցութեամբ: Գաղթականաց թիւը այժմ 1300 է, որոնց 300ը կին ու տղայ են: մնացեալները մեծ մասամբ երիտասարդներ են, որոնք կաշխատին իրենց հացը ճարել բեռնակրութեամբ և այլ գործերով: Պուկար աղետասիրտ տիկիները գաղթականաց ինպատու հանգանակութեան մը ձեռնարկելով, կըսուի թէ բաւական կարեւոր գումար մը գոյացուցած են: Պուկար երիտասարդութիւնն ալ մտադիր է մօտեցնել թատերական ներկայացում մը տալ մեր աղքատ ազգակիցներուն օգնելու համար:

Կալաց 7 Յունվար

Վերջին գաղթականութեանց իբր մի մասնակի օգուտը կրնանք նըշանակել անոնց զարթոյցիչ և զօրացուցիչ դերը: Հայը թողով իր կայք, եկաւ իր խեղճութեամբ յուղի իր հին գաղթական և միտած կարծուած եղբայրները, որ ի տես այնքան թշուառութեան չկրցան անտարբեր մնալ, բացին իրենց քսակը և ուրիշ կերպերով ալ սփռփեցին իրենց ազգակիցքը: Նորը հինը զօրացուց և նոր զօրութիւնը մեծագոյն ազգային գիտակցութիւն ներշնչեց: Մեծ դժբաղդութեանց մէջ միութարական բան մ'է այս:

Ս. Ծնունդի առթիւ ամեն տեղերու գաղթականներ ունկնդիր եղան եկեղեցական փառաւոր երգեցողութեանց: Նորիկ գաղթականներէն 10 հոգիէ կազմուած երգեցիկ խումբ մը ամեն ճիգ թափեց տեղացի Հայերուն ցոյց տալու հայ եկեղեցւոյ արարողութեանց ներդաշնակութիւնն ու քաղցրութիւնը և յաջողեցաւ ուսումնախօսներու բերնէն խել Զի. Գալուստ (ինչ) գեղեցիկ բացագանչութիւնը: Խթումի իրիկունը և Ս. Ծննդեան առաւօտ մեծ խանդ և ուրաւութիւն կը տիրէր եկեղեցւոյ մէջ, որ չի էր բազմութեամբ: Այս եկեղեցական հանգանքները կը պարտինք գլխաւորապէս Տ. Գրիգոր Շահնազարօֆի ջանքերուն:

Կալացցին արդէն նոր տարիէն քանի մ'օր առաջ իր վարժման

առաջին փորձը տուաւ՝ բանայով գիշերային վարժարան մը ուր կը յաճախեն կամաւորներ՝ ընթերցանութիւն գիր և հաշուել սորովելու համար: ուրախալի է տեսնել որ տարիքոտ բանուոր և արհեստաւոր հայաստանցիներ բազմած գրասենյակի վրայ, կը գրեն ու կը կարդան 7-8 տարեկան մանուկներու պէս:

Ամեն նոր սկսուած գործերու պէս՝ սա եւս ունի շատ թերութիւններ, սակայն յայտնենք որ շնորհիւ տեղոյն ուսումնասէր քահանային և տեղացի հարուստներուն, հետզհետէ կը բարեկարգուի գիշերային վարժարանը՝ ծնունդ տալով նաեւ ցերեկեայ վարժարանին, որով կիրագործուի ազգային մեծ բաձանք մը: Եւ ինչո՞ւ առիթը փախցնէ կալացցին. մեծամեծ գումարներ ծախսելով չէր կրնար ձեռք ձգել այն գիւրութիւնները որ ունի այժմ: Կեդր. վարժարանի աշակերտ մը մեծ պատրաստակաւ նութիւն ցոյց կուտայ կրթական գործին ծառայելու: Ընտանիք քահանայ մը թանկագին աշակցութիւն մը կը խոստանայ իրեն: Ինչո՞ւ համար կալացիք իրենց սղաքներ մակաղելով դպրոցական յարկին տակ չտան ազգ. նախական կրթութիւն մը:

Դրամի խնդիրը երբեք չէ կարող արգելք յարուցանել, երբ կալացցին բարոյականի մեծ ուժով փարի այս կենսական խնդրոյն:

Ա. Հ.

Ռուսուք 14 Յունվ.

Ամսոյս 12 ին ազգային ընթերցարանին մէջ երկրորդ անգամ ունեցանք լսարան մը ուր խօսեցաւ նախ արական վարժարանի տնօրէն Տ. Պիտին «Գոյութեան կռիւ» նիւթին վրայ: Յետոյ Տ. Հ. Ծնունդեան արտասանեց յազգի ոտանաւոր մը՝ Հայաստանի թշուառ կացութիւնը նկարագրող: Ունկնդիրները շատ գոհ մնացին թէ բանախօսութենէն և թէ արտասանութենէն և յաճառ բուռն ծափահարութեամբ յայտնեցին իրենց գոհունակութիւնը:

Ընթերցարանի գրապահ Տ. Գ. Տէօքմէճեան ալ տեղեկութիւններ տուաւ ընթերցարանի վիճակին վրայ:

Ուրախալի է տեսնել որ Հայ երգական սենն ալ իր ներկայացուցիչներն ունեցաւ լսարանի ունկնդիրներուն մէջ և այսպէս հաստատեց թէ ինքն ալ սկսած է ձգտիլ մտաւորապէս զարգանալու:

Պանդոնալոր

Եանպօլի, Ալիվէնի, Թաթար Բաղարճըզի, Գարա Բունարի, Զիրբանի, Բառնա Մոհայլէի և Շիշլօֆի մեր այն բաժանորդներ, որոնք անցեալ տարեկըման բաժնեգիրը դեռ չեն վճարած, թող հաճին ընդ փոյթ հատուցանել իրենց պարտքը:

«Իրաւունք»-ի ՊԱՏԱՍԻԱՆԸ

Ս. Գ. Ռուսուք-Տուէք մեզ ձեր հասցէն:

ՍԹԱՆՊՈԼՑԱ ԷԼԶԻԷՐԻՆ ԳՕՆՖԵՐԱՆՍԸ

Պէօյիւք տէվլէթերին՝ էլիլէրինէ վերտիքլէրի թալիմաթըն մապը կոյուշա նամ կազէթատան ալուպ, մուխթասարէն պուրայա տէրճ իտէրիլ:

1) Պիր վագըթտան պէրու Սէրայըն իխլալ իթմիշ օլտըղը Պապը Ալինին մէզուռիյէթ ու սէլահիյէթինին եէնիտէն Պապը Ալիէ Իտա տէ օլընմասը վէ սէրայըն հիւքիւմ տարըզ հուգուզընըն հուտուտ թահթընա գօյըլմասը:

2) Հէր պիր նէղարէթին իլլէրինի թէֆթիշ (գօնթրու) իթմէք իշուն՝ պիրէր էճնէպի մէմուրարըն թալիինի:

3) Արապիսթանտան պաշգա՝ մէմալիքի օսմանիյէնին Ասիա վէ իվրոտ վիլայէթլէրի իշուն-Իտառէի միւսթագիլէ (վարչական ինքնօրինութիւն) թախսի օլընմասը:

4) Սէրայըն վէ հիւքիւմէթին միւսթալէլէսինտէն պիւթիւն պիւթիւնէ սալիթ՝ օլմագ իւղրէ, մահ. քէմէլէրին եէնիտէն թէշէքքիլ իթմէսի:

5) Իվրոտանըն էն կիւզէլ ուսուլի իւղէրինէ վէ մէզէպ ու միլլէթ թէֆթիք իթմէքսիլին՝ նամուպը վէ սապըգասըզ էլիսաստան միւր. րէքքէպ՝ գուվլէի զապըթէնին (ժանտարմա) թէշէքիլի:

Էլիլէրին գօնթէրանսը իգմալ օլտըղընտա՝ Աւստրիա էլիսի Մ. Գալիչ՝ տիկէր էլիլէրէ վէքալէթին՝ գաթի վէ թէհտիսթալը պիր նօթա Սուլթանա վէրէճէք տիր. վէ էլիլէր-մէճիսինին թահ. թը գարապա ալտըղը ճէտվէլին նօթթա պէ նօթթա վէ թէքմիլէն զըստ պիր միւստէթ գարֆընտա իճրա օլընմասըն էլիլէր տէվլէթլէր թարաֆընտան թալէպ իտէ. ճէքլէր: Ա.քսի հալինտէ՝ մէզքիւր գարալարըն իճրասը իշուն լազըմ կէլէն թէտպիրլէրի՝ պիղզաթ տէվլէթլէր էլէ ալաճագլար տըր:

Տ Ը Գ Գ Ա Թ

Բուժանիա կազէթալարընըն եազալըզարընա կէօրէ՝ Թուրքիստան Պուքրէշէ հիճրէթ իթմիշ օլան 4 էլմէնի, պաղըլարընըն թէշվիգի իլէ՝ խարիճտէն Պուքրէշէ կէլէն պիր թիւճարը պըշագլէ եարէլէ միլլէր տիր: Պուքրէշտէն պիղզէ վէրիլէն մալիմաթ տախի, թէէ. սիւֆէն շու վուգուաթը պիր տէ. րէճէ թաստիք իթմէքտէ իսէ տէ, իշտէ պըշագ իսթիմալ իթմէք վէ եարէլէմէք օլմալուպ, եալընըզ պիր գաշ թէքիւրտալընըն Ալապի իսմինտէ պիրիսինի ալըրճա տէօյ. միւշ օլտըզլարընը վէ Ալապիին տախի իշի միւսպալէզա իտէլէք հիւքիւմէթէ իսպար իթտիկինի

պիտուիմէք տիր : Շու կիպի տագիգ սըրաւարտա պաղը միլէթ տաշարըմըլըն հազըղըսըլ ահ վալտէ պուլսնաղըլարընտան տաշարը թէհսիւֆիմիդի պէյանլէ, պուլսնաղըլարը մէվլինին միւստատէ սիլիկի թէտգիգի նաղարա ալուպ տէ, օնա կէօրէ տալրանմալարընը թաւսիյէ իտէրիլ . էկէր եէքաի կէրիմիդտէ բաղանմաղ հիսապար տախի վար իսէ՝ օլ հիսապարը իսթէր շախսի օլտուն իսթէր միլի, շիմաի կէօրմէք ապա սըրասը տէյիլ :

ՄԻԻԹԵՆԵՎՎԻՅԵ

Սուլթան Միւշիքի Ֆուատ բաշայը Սլթանպօլտան չըգարմըլ օլմագ իշուն Պաղտատա կէօնտէրմէք իսթէտիկինի էվլէճէ հաղմըլ իտիք : Նիշայէթ բաշաի միւշաիլէյի Պէրուլթա վալի նասպ օլընաբաղ մահէլի մէմուրիյէթինէ կիթմիլ տիր :

Քէզա սերպէստիյէթ թարաֆ տարը օլան Նէհիպ բաշայը տախի Սուլթան պաշընտան տէֆի իթմիլ օլմագ իշուն Մաուրիտէ էլի թաշին իթմիլ տիր :

Ինկիլթէրա բարլամէնթինտէ Տիգրաէլի նամ մէպոսա՝ Սլթանպօլ էլիսի Սըրֆիլիք Գըրրինին թուլթմըլ օլտըլը թարիգլէ Սուլթանը ինկիլթէրատան սօվուլթմըլ օլտըլըն վէ Հինտիսթանտաքի իսլամ լարըն թէտաուպընա թօգանա պիլէճէք օլտըլըն պէյանլէ, ինկիլթէրանըն մէնֆաւթըն մուհաֆազա իթմէք իշին, Սլթանպօլա ֆէվզէյաւտէ պիր էլիլ հօլլամագ թէքիլֆինտէ պուլընմըլ տըր . խաւրիճիյէ միւսթէշարը Մ. Գըրըն Մ. Տիգրաէլին թէքիլֆինի բէտտ իտէրէք, Սըրֆիլիք Գըրրինին իֆաի մէմուրիյէթինտէն խօշուտիյէթ կէօնթէրմիլ տիր : տիկէր մէպուլար տախի պուլ էֆքեարը թաւտիգ իթմէքլէ, Մ. Տիգրաէլին թէքիլֆի գալթիէն բէտտ օլընմըլ տըր :

Ինկիլթէրա մալիյէ նաղըրը Մ. Պալֆուր տախի պուլ մէնէլէտէ իլալէթէն տէմիլ տիր «էկէր Սուլթան բէֆօրմալը իծրա իտէր իսէ պիր թէհիլքէ հօգ տըր, աքսի հալինտէ թաշթընտան ինտիլիլէճէք տիր :»

Ֆիլիպէտէն էվրօբա կաղէթալարընա քէշիտէ օլընան պիր թէլէկրաֆ Սլթանպօլ հարպիյէ մէք թէպլին պաշ մուալիմի գօմանտան թէֆիլք բաշանըն էվրօբայա գաշմըլ օլտըլըն պիրտիլիլ տիր :

Ալման Նասիօնալըն Սլթանպօլտան Ֆիլիպէ թարիգի իլէ վէրտիկի պիր թէլէկրաֆա նաղարէն՝ էլիլէրտէն թէրթիպ օլընան իսլահաթ ճէտվէլինտէ՝ սաիր միլլէթէր գատար իսլամարըն ֆախտէլէր տախի կէօգէտիլմիլ օլտըլընտան տօլայը Սուլթան էլիլէրէ թէլէքիլարթըն պէյան իթմիլ

վէ տէվլէթլէրին շու թէլէպպիւսինէ սըտղը գաղպէ հարաւմաա պուլընաղընը իֆաւտէ էլիլէմիլ տիր : (Ինտանալըմըլ)

Թաւն կաղէթաւընը Սլթանպօլ մուլալիլի պա թէլէկրաֆ աթիտէքի հապատիսի պիրտիլիլ տիր :

Անատօլըն պիր չօգ շէհիլէրինտէ իսլահաթ սէպէպի իլէ թիւրքէր հիտաթլէնմիլլէր տիր . վան, Պիլթիլ, էկին, Ուրֆա վէ սաիր եէրլէրտէ էրմէնիլէրին հալի թէհիլքէտէ տիր . բարապալքիլիլէր իշէրիսինտէ թաշթը մուհասէրէտէ օլուպ, տըշարտան իմտատ իսթէյօլար :

Սլթանպօլ ինկիլթէրա էլիլին Աքալէ միլիթէրի գէվէսի իլէ պէլապէր կէզմէքտէ օլտըլը սըրատա պիր թիւրք իթալէի լիսանտա պուլընմըլ . պուլսնաղ իւղէրինէ՝ ինկիլիգ մէքիլք թիւրքիւն հաղաւթնտան թալթուպ, եէրէ աթմըլ . պուտա պըշապէ իւղէրինէ հիւճիւմ իթմիլ իսէտէ, օրատա հաղըր պուլընտան թիւրքէր անըն էլիլնաէն պըշաղը ալուպ քէնտիսինի բօլիսէ թէպլիմ իթմիլլէր տիր :

ՊԻՐ ՐՈՒՅԱ

Պուքէշտէ նէշը օլընան Բարիս նամ՝ բուլմա կաղէթանըն հաղաւթընա պիլնաէն՝ Սլթանպօլտա բուլմարը տախի թիւրքէրէ գարըլ չըգարմագ իշին՝ բուլմարըն Ս. Ծնունդ եօրթուլարը միւնասիպէթլէ, էրմէնիլէր թիւրք էլիլիլէրի կիլիսիպ քիլիսէլէր իւղէրինէ հիւճիւմ իտէրէք թիւրքէր վէ բուլմար աղասընտա պիր իսթիլալ չըգարմագ վէ օլ վէշիլէ էրմէնիլէր քէնտի էֆքեարընը իծրա իթմէկէ ֆըրաթ պուլմագ թէլէպպիւսինտէ պուլընաղըլար իմիլ իսէտէ, գաղըթաւա էլէ կէշիլիլէն իքի մէքթուպլէր իլէ իշմէյտանա չըգարագ, էրմէնիլէրին շու թէլէպպիւսին ֆիլիլ չըգմաւընա՝ մէյտան վէրիլմէմիլ իմիլ : Բարիսիսին շու իսէպլընա «բուլյան խայր օլտուն» տէմէքլէ իգթիֆա իտէրիլ :

ԳԱԹԻԼ ՄԱՋԱՐ ՊԵՑ

Բահիպ Սալվաթօրըն գալթիլ Մաղհար պէյին պէրաւթընա Մաւաշ մահքէմէսինտէն վէրիլէն իլաւմըն լաղլը իլէ, մահքէմէսի եէնիլտէն Հալէպտէ իծրա օլընաղըլըն հաղմըլ իտիգ . սօն հալաւտիսաթա կէօրէ՝ Հալէպտէ պուլընտան Ֆրանսա վէ իթալիա գօնաօլոս թէրճու մանլարը մուհաքէմէ էանասընտա սալօնա կիրիւպ՝ մահքէմէ աղալարընտան տէօրտիլին եինէ Մաւաշ մահքէմէսի աղալարընտան օլտըլըն կէօրէրէք բրօթէսթ իտիւպ տըշարը չըգմըլար տըր : էլիլիլէր պուլ մուհաքէմէյի տախի գաղալ իթմէյէճէքլէր տիր :

ԵՌԻՆԱՆԻՍԹԱՆ ՎԷԹԻԻՔԻՍ

Ալթինատաքի օսմանլը էլիլինին Երանան հիւքիւմէթինէ վէրմիլ օլտըլը պիր նօթանըն մաւալը պէր վէճհի աթի Ասրի նամ կաղէթատա կէօրիւմիլ տիր :

Օսմանլը էլիլին Երանանիսթանտան Մաքէտոնիայա բուլմա էլէթէլէրի կիրուպ, էնվաի խասարաթ վէրմէքտէ օլտըլարըն պէյանլէ, պուլսնաղըլըլարըն մէնի իշուն Երանան հիւքիւմէթինին էմիրնամէլէրինտէն պիր ֆախտէ հաւալ օլմաուղըն կէօնթէրմիլ, վէ պուլ հալին տէվմըլ՝ իքի տէվլէթ պէյինտէ ճարի օլան միւնասէպէթի հասէնէնին իսիլալընա սէպէպիլիլէր վէրէպիլէճէք՝ տէմիլ տիր :

ԹԻԻՐԻՍԻՆԸ ԻՍԹԻՐԱՍԸ

Թիւրքիանըն եէնի պիր իսթիգըալ իտէպիլմէսի իշուն, պուլ կիւնէ գատար կաղէթալարտա չօգ պահալար կէշտի իսէ տէ, Ֆրէմտէպլար նամ վիլէնատա նէշը օլտուն նիւմէսի կաղէթանըն վէրտիլի սօն հալաւտիսէ կէօրէ՝ թիւրքիանըն իտէպիլէճէկի իսթիգըալ ֆախլէրինին էօտէնմէսին տէվլէթլէր քէֆիլ օլմայուպ, հալընըլ օլմագսէտէ թախսիս օլընաղըլ հասըլալթըն պաշգա պիր եէրէ սարֆ օլընմաւաւըն թէհալու իտէճէքլէր իմիլ :

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏԻՆ

ՍԵՐՎԵԹԻ

Գաղէկան Յակոբ բաշանըն վէֆաթը սէնէսինտէ՝ Ֆրանսա, Ամերիգա վէ ինկիլթէրա ֆօնտօլալը օլտարագ Սուլթան Համիտին սէրվէթի 7,200,000 լիւրատան իպարէթ իմիլ : Յակոբ բաշանըն խաղընէի խասսէյէ նաղըր թային օլընաղըլ սէնէլէրտէ՝ խաղընէին ելտա 150,000 լիւրա աչըլը վար իքէն, վէֆաթը սէնէսինտէ թաւաթը օլտարագ՝ սէնէտէ 100,000 լիւրա իրատ վէրիյօր իտի . պուլ կիւն իրատ 700,000 լիւրայա պալիլ օլտըլը կիպի եէտի միլիօնլէք սէրմայէ տախի 15 միլիօն լիւրայը կէշմիլ տիր :

«Միգան» կաղէթաւը իշպու մալիւմաթը վէրիւպ, էրմէնիլէրին պանգա մաւաթլաթընտա մէհարէթինի իթիւրաֆ իտէրէք, թէքար թիւրքէ մախսուս օլան թէտաուպըն էօրթմէլէրէք՝ սաիր էրմէնի մէմուրարըն Օսմ . պանգա, չըմէն տըֆէր վէ տէյունը ումուլիէտէն թարա օլընաղըլարը կիպի Միքաէլ ֆօրթուգուլ բաշանըն թարա օլընաղըլընա եիւրէկ աճըսըն պէյան իտիյօր :

ԿԻՐԻՏ

Գանհատան չէքիլէն պիր թէլէկրաֆա նաղարէն՝ Յունկար 14 տէ Գանհա ճիւլարընտա խըրիսթիանալար վէ իսլամար պէյինտէ եէնի

գաղալար զուհար իթմիլ : Խալմալարտան պիր էլլըյա չէթէսի խըրիսթիանալարըն իւղէրինէ հիւճիւմ խաւապ պիր գաշընը հարէլէտիքտէն սօնա, գալթըրճըլարըն հալաւտարըն եի . քէրի իլէ պէրապէր սիւրիւպ կէօթիւրմիլ տիր : Տիկէր պիր թարաֆտա պիր խըրիսթիան էօլտիւրիւմիլ : Ֆէվզէլաւտէ հէյէճան վէ պիհուգուրըլ հիւքմ իթմէքտէ օլտըլընտան, աիւքհանլար գարալը գալմագտա իմիլ :

Վալի Պէրօլիլ բաշա՝ իտարէ մէլիսինին գարարը իլէ Ֆրանսըլ պանգաւընտան 10000 օսմ : լիւրա . սը իսթիգըալ իթմիլ վէ կէօմըրիւկ, թուլ վէ թիւթիւն հաւալալարը թէմիլնաթ կէօնթէրմիլ տիր :

Ճանտարմանըն թէլէքիլի իշուն 30 Պուլկար վէ 72 Գարա . աղըլը նասպ օլընմըլ օլտըլը կիպի, ինկիլիլ գապիթանընտան Մ. Պօր տախի գապիլիյէ գօմանտան . լըլընա թային օլմըլ տըր :

ՉԱԽԻՐԷ ԲԻՍՏԱՍԸ

Վաւնա 22 Յունկ . Պուշտալ վալօն, 57-59, 50 լիպր . հէքթօլ 10, 70-11, 10 ֆրանք Արապա . 57-61 լիպրա, հէքթօլթր 10, 20-11, 20 ֆրանք

Արաւ 44-46 լիպրա, հէքթօլթ. 5-5, 20 Ֆաւաւա 100 օգ . 22-28 ֆր . (մալա կէօրէ) Մաւար պուշտալ չէքթօլթր 5, 40-5, 80 ֆրանք . Նարօլէն 20, 40 ֆռ . հիսապը իլէ կիւնտէ 30-40 վալօն վէ 40-50 ալապա պուլտալ, 8-10 ալապա ալապա վէ 4-5 ալապա մալը պուլտալը ինմէքտէ տիր : Ֆաւաւա կա ինմէյօր :

ՄԱՍՆԱԻՐ ԴԱՍԵՐ

Անգլիէրէնի գասիւր տուղ Օրիորդը փոխադրած է իր բնակուլթիւնը Երկրորդ Թալ թիւ 1057 տունը . իր գասիւրը պիտի վերսկսի ֆետր . 1 էն : վճարմունք կանխիկ :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍՐՃԱՐԱՆ - ԴԱՐԵՋՐԱՏՈՒՆ ԵՒ ՃԱՇԱՐԱՆ «ՄԱՍԻՍ»

Ալէքսանդրօվսկա փողոց, թիւ 3557 (ՌՈՒՍՅՈՒՔ)

Մաքրութիւն, աթանութիւն և գոհացուցիչ սպասարկութիւն . այս երբեակ յատկութիւնները, անհրաժեշտ նմանօրինակ լաւագոյն հաստատութիւններու, ամեն կերպով յանձնարարի ի կը դարձնեն Տ. Օնիկի Յ. Քէշիլիանի Մաւար տէրացի և գաղթական ազգայիններու : 5-4

ՀԱՅԿԱԿԱՆ

ԳՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Գոհացուցիչ պայմաններով կը հայթայթէ Հայերէն, Անգլիերէն և Գաղղիերէն գրատպըր, գալոցի և գրասենեկի գանազան պիտոյք : Գրեանց ցանկը գորոցաց ձրի կը տրուի : Դիմել Մ. խաչիկեանի, վաւնա, Օթէլ Պուլկարիա, թ. 8 :

Գրատան հասած են նաև Մարտիլի Մ. ֆորթուգուլեան գրատան Ազգային գրանց նմայնիլը : Քիլէ օրէն՝ մեծ քանակութեամբ :